

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Հայաստանի Հանրապետության պետական դրոշ
Ընդհանուր տեխնիկական պայմաններ



ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ 2012

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանշանների ճանաչման, արժեվորման և հանրահռչակման ապահովման աշխատանքային խմբի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ՀՀ ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի N 84-Վ հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում,

5 ՀՍ 50-94 ստանդարտի փոխարեն

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են “Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ” տեղեկատվի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ

ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.sarm.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության

Բովանդակություն

1	Կիրառման ոլորտը	1
2	Նորմատիվ վկայակոչումները.....	1
3	Տեխնիկական պահանջներ	3
4	Ընդունումը	6
5	Հսկողության մեթոդները	6
6	Փոխադրումը և պահումը.....	6
7	Արտադրողի երաշխիքները	7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Հայաստանի Հանրապետության պետական դրոշ Ընդհանուր տեխնիկական պայմաններ

Государственный флаг Республики Армения
Общие технические условия

National flag of Republic of Armenia
General specifications

Գործարկման թվականը-01.01.2013

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտը տարածվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշի (այսուհետ՝ դրոշ) վրա և սահմանում է դրոշին ներկայացվող տեխնիկական պահանջները, փաթեթավորմանը և մակնշմանը պահանջները, ընդունման կարգը և հսկողության մեթոդները:

2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

ՀԱՏ ԻՍՕ 780-2010 Փաթեթավորում. Բեռների վարվելակարգային գրաֆիկական մակնշում

ԳՕՍ 427-75 Մետաղական չափիչ քանոններ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 2846-82 Գերատեսչական նշանակության բրդե և կիսաբրդե գործվածքներ. Գույնի կայունության նորմեր և դրանց որոշման մեթոդներ

ԳՕՍ 3811-72 (ԻՍՕ 3801-77, ԻՍՕ 3932-76, ԻՍՕ 3933-76) Գործվածքներ և հատով տեքստիլ արտադրատեսակներ. Փորձարկման մեթոդներ

ԳՕՍ 6309-87 Կարի բամբակյա թելեր . Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 7000-80 Տեքստիլ նյութեր. Փաթեթավորում, պիտակավորում, փոխադրում և պահպանում

ԳՕՍ 7625-86 Պիտակի թուղթ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 7730-89 Ցելյուլոզային թաղանթ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 7933-89 Սովարաթուղթ սպառողական տարայի համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ

ԳՕՍ 8273-75 Փաթեթավորման թուղթ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 9733.0-83 Տեքստիլ նյութեր. Ֆիզիկաքիմիական ներգործությունների նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդներին ներկայացվող ընդհանուր պահանջներ

ԳՕՍՏ 9733.1-83 Տեքստիլ նյութեր. Լույսի ներգործության նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 9733.2-91 Տեքստիլ նյութեր. Եղանակի ներգործության նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 9733.3-83 Տեքստիլ նյութեր. Արհեստական լուսավորության (քսենոնային լամպ) լույսի նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 9733.4-83 Տեքստիլ նյութեր. Լվացման նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 9733.10-83 Տեքստիլ նյութեր. Ջրի կաթիլների նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 9733.13-83 Տեքստիլ նյութեր. Օրգանական լուծիչների նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 9733.27-83 Տեքստիլ նյութեր. Շփման նկատմամբ ներկվածքի կայունության փորձարկման մեթոդ

ԳՕՍՏ 10354-82 Պոլիէթիլենային թաղանթ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 10681-75 Տեքստիլ նյութեր. Փորձանմուշի լավորակման և փորձարկման համար կլիմայական պայմաններ և դրանց որոշման մեթոդներ

ԳՕՍՏ 11151-77 Բրդե և կիսաբրդե գործվածքներ. Ներկվածքի կայունության նորմեր և դրա որոշման մեթոդներ

ԳՕՍՏ 11600-75 Տեքստիլ նյութերի և արտադրատեսակների փաթեթավորման թուղթ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 12807-2003 Կարի արտադրատեսակներ. Կույթերի, շարակարերի և կարերի դասակարգումը

ԳՕՍՏ 15968-87 Հագուստի մաքուր վուշե, վուշե և կիսավուշե գործվածք. Ընդհանուր տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 16958-71 Տեքստիլ նյութեր. Ինամքի պայմանանշաններ

ԳՕՍՏ 18510-87 Մաքուր թուղթ. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 20566-75 Գործվածքներ և հատով տեքստիլ արտադրատեսակներ. Ընդունման կանոններ և նմուշառման մեթոդ

ԳՕՍՏ 20723-89 Զգեստի գործվածքներ ոլորած բնական մետաքսից

ԳՕՍՏ 21790-93 Բամբակե և խառը գործվածք հագուստի համար. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 23627-89 Տեքստիլ արդուզարդի գործվածքներ, հյուսված և գալարուն գործված, գծամետրով և հատով: Ներկվածքի կայունության նորմեր և նրա որոշման մեթոդներ

ԳՕՍՏ 27504-87 Կիսաեթերային գործվածք վրանածածկի տեխնոլոգիան. Տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 24297-87 Արտադրանքի մուտքային հսկողություն. Հիմնական դրույթներ

ԳՕՍՏ 28000-88 Հագուստի գործվածքներ մաքուր բրդե, բրդե և կիսաբրդե. Ընդհանուր տեխնիկական պայմաններ

ԳՕՍՏ 28253-89 Շրջագգեստի և շրջագգեստա-կոստյումային գործվածքներ մետաքսյա և կիսամետաքսյա. Ընդհանուր տեխնիկական պայմաններ


ԳՕՍՏ 29298-92 Գործվածքներ բամբակյա և խառը, կենցաղային. Ընդհանուր տեխնիկական պայմաններ

3 Տեխնիկական պահանջներ

3.1 Հայաստանի Հանրապետության պետական դրոշը պետք է համապատասխանի սույն ստանդարտի պահանջներին, ինչպես նաև սահմանված կարգով հաստատված ազգային էտալոնին:

3.2 Բնութագրերը

3.2.1 Հայաստանի Հանրապետության դրոշը (նկար 1.) եռագույն է՝ վերևից ներքև ձգվող կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունը պետք է լինի 1:2-ի:



L - դրոշի երկարությունը, B - դրոշի լայնությունը, b_1 - կարմիր շերտի լայնությունը, b_2 - կապույտ շերտի լայնությունը, b_3 - նարնջագույն շերտի լայնությունը,

Նկար 1. Հայաստանի Հանրապետության դրոշը

3.2.2 Դրոշի չափերը սահմանվում են՝ համաձայնեցնելով սպառողի հետ: Դրոշի երկարության և լայնության շեղումը չպետք է գերազանցի $\pm 2\%$ -ը:

3.2.3 Դրոշը պատրաստում են տպագրման եղանակով կամ կարելու միջոցով: Դրոշը պատրաստում են 100% պոլիէթերային գործվածքից, իսկ շենքերի ներսում տեղադրելու համար նախատեսված դրոշը՝ նաև բամբակե, վուշե խառը, մետաքսե կամ բրդե գործվածքից: Դրսում տեղադրելու համար նախատեսված դրոշի գործվածքի խտությունը պետք է լինի ոչ պակաս 90 գ/մ²-ից:

3.2.4 Դրոշի գործվածքի գունավորման կայունությունը՝ ըստ ԳՕՍ 9733.0 ստանդարտի, պետք է լինի ոչ պակաս 5 բալից՝ լույսի և եղանակի ներգործության նկատմամբ, 4 բալից՝ ջրի կաթիլների ներգործության նկատմամբ և 3 բալից՝ չոր և թաց շփման նկատմամբ:

3.2.5 Դրոշի գործվածքի երեսակողմի և հակառակ կողմի գունային դաջվածի ինտենսիվության տարբերությունը չպետք է գերազանցի 15 %-ը:

3.2.6 Դրոշի պաստառի գործվածքի շերտերը պետք է ձևել դրոշի երկարությամբ երկայնական թելի պահպանմամբ, իսկ եզրերը պետք է եզրակարել ծալքակարով: Դրոշը պատրաստում են ամբողջական գործվածքից կամ կարելու միջոցով:

3.2.7 Դրոշի պաստառի եզրերը պետք է մշակել երեսակողմից չերևացող զարդակարով, որից հետո՝ 0,3-ից մինչև 1,0 սմ լայնությամբ փակ կարվածքով (հարթակարով)՝ ըստ ԳՕՍ 12807 ստանդարտի:

3.2.8 Կարը պետք է լինի ամուր, ուղիղ, կարի ծայրերը պետք է ամրացված լինեն հետադարձ կարով՝ 0,7 սմ ոչ պակաս երկարությամբ: Կարի հաճախությունը պետք է լինի 15-20 կուր (կար)՝ յուրաքանչյուր 5 սմ վրա:

3.2.9 Թելերը պետք է համապատասխանեն ԳՕՍ 6309 պահանջներին: Դրոշը պետք է կարել շերտի գույնի կամ թափանցիկ կարի թելերով: Երեք շերտից կարվող դրոշը պետք է կցակարել տարբեր թելերով՝ վերևի և ներքևի շերտերի գույներին համապատասխան:

3.2.9 Դրոշները պատրաստում են ամրացման երկու եղանակով.

- ձողին կցելով՝ գրպանի միջոցով,
- եզրակի օգնությամբ:

Գրպանի լայնությունը պետք է լինի դրոշի երկարության 5%-ից ոչ ավելի և չգերազանցի 10 սմ:

Եզրակի լայնությունը՝ 3,0-ից մինչև 3,5 սմ:

3.2.10 Հայաստանի Հանրապետության դրոշի գույները պետք է համապատասխանեն տարբեր գունային մոդելների արժեքներին, որոնք տրված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1.

Գույնը	Pantone	RGB	CMYK	html
Կարմիր	485	R: 217; G: 0; B: 18	C: 0% M: 100% Y: 100% K: 0%	#D90012
Կապույտ	286	R: 0; G: 51; B: 160	C: 100% M: 80% Y: 0% K: 0%	#0033A0
Նարնջագույն	1235	R: 242; G: 168; B: 0	C: 0% M: 35% Y: 100% K: 0%	#F2A800

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ- **Pantone** և **CMYK** տարբերակները կիրառվում են տպագրությունում, **RGB** տարբերակ կիրառվում է կայքերում և հեռուստատեսությունում, **html** տարբերակը կիրառվում է կայքերում:

3.2.11 Դրոշներն արտադրում են առանց տեսակավորման:

Պատրաստի արտադրանքում չեն թույլատրվում հետևյալ արատները.

- գործվածքի կառուցվածքի ամբողջականության խախտում, այդ թվում գործվածքախոտան և թերաթեզան,

- բիծ, որը գերազանցում է 0,3 սմ,

- մանածագործական արատներ՝ տեսանելի գերուլոր թելերը, 10 սմ-ից ավելի շեղաթելերը, 0,3 սմ-ից ավելի խտվածքները, հենքի և թեզանի վրայի նկատելի արտահայտված շերտերի տարբերություն,

- լավ տեսանելի երանգային տարբերությունը գունային շերտում:

3.2.12 Յուրաքանչյուր շերտի գույնի կայունությունը պետք է համապատասխանի ԳՕՍՍ 2846, ԳՕՍՍ 11151 և ԳՕՍՍ 23627 ստանդարտների պահանջներին:

3.3 Մակնշումը

3.3.1 Պատրաստի դրոշին ամրացվում է ապրանքային պիտակը, որտեղ նշվում է.

- արտադրողի անվանումը, նրա ապրանքային նշանը (առկայության դեպքում), գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ երկիրը),

- արտադրատեսակի անվանումը և դրա չափերը , սմ,

- կիրառման ոլորտը,

- սույն ստանդարտի նշագիրը,

- թողարկման թվականը:

3.3.2 Պիտակի թուղթը՝ ըստ ԳՕՍՍ 7625, ԳՕՍՍ 11600, ԳՕՍՍ 8273, ԳՕՍՍ 18510:

Պիտակը լրացվում է տպագրական եղանակով կամ դրոշմման միջոցով:

3.3.3 Դրոշների փոխադրական մակնշումը՝ ըստ ՀՍ ԻՍՕ 780:

3.4 Փաթեթավորումը

3.4.1 Դրոշների առաջնային փաթեթավորումը կատարվում է ստվարաթղթից՝ ըստ ԳՕՍ 7933, պատրաստված տուփերի կամ պոլիէթիլենային թաղանթի՝ ըստ ԳՕՍ 10354, մեջ 10, 15, 25 հատով կամ այլ քանակով՝ համաձայնեցված սպառողի հետ:

Սպառողի հետ համաձայնության դեպքում թույլատրվում է օգտագործել փաթեթավորման այլ միջոցներ:

Փաթեթավորման միավորի վրա փակցվում է պիտակը, որը պարունակում է 3.3.1 կետի տեղեկատվությունը և արտադրանքի քանակը:

3.4.2 Դրոշների փաթեթավորումը փոխադրման համար՝ ըստ ԳՕՍ 7000 ստանդարտի:

4 Ընդունումը

Դրոշների ընդունումը՝ ըստ ԳՕՍ 20566:

5 Հսկողության մեթոդները

5.1 Նմուշառումը՝ ըստ ԳՕՍ 20566

5.1 Դրոշների գծային չափերի որոշումը՝ ըստ ԳՕՍ 3811:

5.2 Ներկվածքի կայունության որոշումը.

- ներկվածքի նորմերը և կայունությունը՝ ըստ ԳՕՍ 2846, ԳՕՍ 11151, ԳՕՍ 23627,

- փորձարկման մեթոդներին ներկայացվող ընդհանուր պահանջները՝ ըստ ԳՕՍ 9733.0,

- լույսի նկատմամբ՝ ըստ ԳՕՍ 9733.1, արհեստական լուսավորության լույսի նկատմամբ՝ ըստ ԳՕՍ 9733.3,

- եղանակի նկատմամբ՝ ըստ ԳՕՍ 9733.2,

- լվացման նկատմամբ՝ ըստ ԳՕՍ 9733.4,

- ջրի կաթիլների նկատմամբ՝ ըստ ԳՕՍ 9733.10,

- շփման նկատմամբ՝ ըստ ԳՕՍ 9733.27:

5.3 Դրոշները պետք է փորձարկել մթնոլորտային պայմաններում՝ ըստ ԳՕՍ 10681. Նախքան փորձարկումը դրոշը բաց վիճակում պահում են նույն պայմաններում 24 ժամ տևողությամբ:

6 Փոխադրումը և պահումը

Փոխադրումը և պահումը՝ ըստ ԳՕՍ 7000:

7 Արտադրողի երաշխիքները

7.1 Արտադրողը պետք է երաշխավորի դրոշի որակի համապատասխանությունը սույն ստանդարտի պահանջներին՝ պատվիրատուի կողմից փոխադրման և պահման պայմանները պահպանելու դեպքում

7.2 Դրոշի պահման ժամկետը 5 տարի է արտադրման օրվանից:

ՍԴ 59.080.30

IDT

Հանգուցային բառեր. պետական դրոշ, տեքստիլ նյութեր, տեխնիկական պահանջներ, փաթեթավորում, մակնշում
